ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՊՐԻԼԻ 27-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, ուխտավորությամբ Մայր Աթոռ ժամանեցին Հունաստանից պր. Ա. Պետրոսյանը և Պզտիկյանը, Բեյրութից տեր և տիկին Հ. Ալթունյանները։ Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առջև, իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, ուխտավորները բարձրացան Վեհարան՝ Վեհափառ Հայրապետի օրհնություններն ստանալու։

***

ԱՊՐԻԼԻ 29-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «ԿՐԿՆԱԶԱՏԻԿ» («Նոր կիրակի»)։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում էր Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՅԻՍԻ 6-ԻՆ, ԿԻՐԱԿԻ («Աշխարհաշատրան» կամ «Կանաչ կիրակի»), Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանը բնաբան ունենալով «Աքանչելի է խորհուրդ տնօրէնութեան քո Քրիստոս, որ իջեր ի Հօրէ ի սէր հարսին Եկեղեցւոյ զոր ընտրեցեր»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿԻ («Կարմիր կիրակի»), Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պողոսյանը, բնաբան ունենալով «Նոքէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են քարոզութիւնք մեր, ընդունայն են և հաւատքն Ձեր»։

Սուրբ պատարագին ներկա էին մեծ թվով սփյուռքահայ ուխտավորներ։

***

ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, առավոտյան ինքնաթիռով, տեր և տիկին Հ. Ալթունյանները մեկնեցին Բեյրութ, Մայր Աթոռից և Հայրենիքից իրենց հետ տանելով լավագույն տպավորություններ։

***

ՄԱՅԻՍԻ 19-ԻՆ, ՇԱԲԱԹ, Վեհափառ Հայրապետի հրավերով, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Եղիա Փեչիկյանը, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հոբելյանի տոնակատարության առթիվ, ժամանեց Մայր Աթոռ։

***

ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Երևումն Ս. Խաչի»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը, բնաբան ունենալով «Փայտ կենաց որ փոխանակ մահացու պտղոյն, զՔրիստոս պտղաբերեցեր»։

Սուրբ պատարագին ներկա էին սփյուռքահայ բազմաթիվ ուխտավորներ։

***

ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի հրավերով, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի հոբելյանական տոնակատարության առթիվ, Մայր Աթոռ ժամանեցին Արևմտյան Եվրոպայի հայոց Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը, ԱՄՆ-ից պրոֆ. Մանասե Սեակը և Բեյրութից բանաստեղծ պր. Վահե Վահյանը։

***

ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Վեհափառ Հայրապետի հյուր գրող պր. Կոստան Զարյանը իր տիկնոջ հետ։